# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## 1920 - ՅՈՒՆԻՍ - 1920


| | Էջ |
|---|---|
| ՄԵՂՐՈՒ ՇԻՐԱԿԱՑ. — *Հայաստանի օրը.* | 161 |
| ՄԻՆԱՍԵԱՆ ՍԵԴՐԱԿ. — *Հելլէնէ, (Ողբերգութիւն)* | 163 |
| ՅՈՎՍԷՓԵԱՆ Հ. Ա. — *Հայրենիքի լեզուն* | 167 |
| ՍԻՆԱՆԵԱՆ Հ. Խ. — *Ճանապարհորդութիւն Ներքին մոլորակներու* | 171 |
| ՄԵՂՐՈՒ ՇԻՐԱԿԱՑ. — *Դիւանագիտութեան դիմակները* | 172 |
| ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ Հ. Ս. — *Փառքի զաւակներ* | 180 |
| Հ. Ա. Տ. — *Կենսաբանութիւն և Հասարակցութիւն* | 185 |
| ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. — *Յայգաթիթեռը (Թատեր. քերթ.)* | 189 |
| ԵՂԻԱ ԵՐ. ՄԵԼՔԵԱՆ. — *Յիշատակին զոհը.* | 192 |


# ՀԱՃԸՆՑԻ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ ԿՈՉԸ

## ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ԽՂՃԱՄԻՏ ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ

*Լեռնային Կիլիկիոյ քաղաքներէն ընդհանուր պատերազմի ատեն տարագրուած և ջարդուած մեր ծննդավայրին՝ Հաճնոյ 35,000 հայութեան բեկորները եղող 10,000 մեր եղբայրները ու քոյրերը Մարտ 13էն ի վեր պաշարուած են Թուրքերու կողմէ և յուսահատական կռիւներ կը մղեն իրենց կեանքը պաշտպանելու համար առանց արտաքին ո՛ և է օգնութեան, հակառակ Կիլիկիոյ և Արտասահմանի Հայ հոգեւոր պետերու և Ազգ. մարմիններու Համաձայնական կառավարութեանց մօտ ըրած թախանձագին և տեւական դիմումներուն՝ ցարդ Հաճնոյ օգնութեան հասնող չէ եղած։ Հաճընը չըլլալով Վէրտօն մը կամ Պէլֆօր մը, չպիտի կրնայ դիմանալ այլեւս հազարաւոր «Միլլիճիններու» կազմակերպեալ յարձակումներուն և պիտի ջարդուի անխնայ Մարաշի նման մօտ ատենէն դժբաղդաբար։*

*Յանուն Քրիստոնէութեան և մարդկութեան, արտասուալից կը խնդրենք Համաձայնական Երկիրներու խղճամիտ և բարեսէր Տիկիններէն որ ձայնակցին մեզ եւ բարեխօսեն Հաճնոյ օգնութեան փութացնելու յաղթական Համաձայնական բանակները, որոնք փոքր ազգերը բարբարոսներու ձեռքերէն փրկելու համար պատերազմեցան։*

*Օգնութի՛ւն, օգնութի՛ւն։*

Պաշարուածներու կողմանէ

*Տիկ.* ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳՈՒՐՃԱԴԵԱՆ
» ՎԱՐԴՈՒՀԻ ՇԸՔԸՐՏԸՄԵԱՆ
» ԱՐԱՔՍԻ ՄԱՆԿԸՐԵԱՆ

*Ադանա,* 14 *Մայիս* 1920

digitised by A.R.A.R.@